Թառ



Թառն ունի երկխոռոչ ութաձև արձագանքարան, երկար վզիկ, քառանկյուն գլխիկ: Թառ պատրաստելու համար նախընտրելի է թթենու փայտը: Թառն ունի 11–12 մետաղե լար՝ պողպատե (սպի-տակ), պղնձե (դեղին), բրոնզե (կարմիր): Նվագարանի մեծ հնչյու-նածավալի ներքևի հատվածը հնչում է փափուկ, թավշե երանգով, իսկ վերևի հատվածը հնչեղ է ու վառ:

Թառը հայերի երաժշտական կենցաղում առավելապես մենակա-տարային նվագարան է:

Կատարման ձևը պահանջում է թառը հենել կրծքին, պահել հո-րիզոնական դիրքով: Հնչեցնում են հպանի կամ հարիչի (մզրապ, կնտնտոց, մեդիատոր) օգնությամբ, աջ ձեռքի դաստակի բազմաձև շարժումներով: